

# ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՎԱՏ ՀԱՐԱԶԱՏ ԿՐԹՕԶԱԽՆ

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

## Արձագանք Մելգոնյան վարժարանի 85-ամյա հորեյանի հանդիսությանը



2005 թ. սփյուռքահայությունը նոր տազնապ ու խռովք ապրեց. փակվում էր հայկական սփյուռքի ամենահին կրթարաններից մեկը՝ Կիպրոսի Մելգոնյան վարժարանը, եւ հայության ընդդիմացող ստվար հատվածը՝ արտերկրի եւ Հայաստանի, արդյունքի չհասավ: Ութ տասնամյակ շարունակ հայ ոգուն նվիրաբար ծառայող հայապահպան այդ դպրանոցը, հայապաստան բերդ-ամրոցը փակվեց հիմնադրված մեր ժողովրդի դժվարագույն հետեղեռնյան առաջին շրջանում 1924-ին, ազգային

բարերարներ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնյանների կտակով նախապես որպես որբանոց-նախակրթարան: Երեք տարի անց այն վերածվեց բարձրագույն նախակրթարանի եւ 1934-ից արդեն լրիվ միջնակարգ գիշերօթիկ վարժարան էր: Հայկական մթնոլորտի, կրթական-մանկավարժական հարուստ ավանդույթների շնորհիվ այս վարժարանը սփյուռքահայության համար իսկապես որ «կտոր մը Հայաստան» դարձավ, եւ սփյուռքի այն քիչ կրթարաններից էր, որին ծանոթ էին շատերը՝ անգամ Սով. Հայաստանում:

Մելգոնյան վարժարանի սաները՝ աշխարհի տարբեր երկրներից մեկ հարկի տակ հավաքված հայ պարմանի-պարմանուհիներ, ուսանում էին ինչպես հայագիտական, նաեւ բնագիտական առարկաներ, օտար լեզուներ: Ժամանակակից կրթության համար վարժարանն օժտված էր բոլոր միջոցներով, ուներ համապատասխան սարքավորումներով լաբորատորիաներ, հարուստ գրադարան, ակումբներ, մարզադաշտ, լողավազան, հիվանդանոց, համակարգչային սրահ, ձեւավորվել էին արվեստի տարբեր խմբակներ, քառաձայն երգչախումբ, փողային նվագախումբ, հրատարակում էր սեփական պարբերականը («Ցոլք»), դպրոցական տարեգիրքը («Այգ»):



Ազգային մթնոլորտ եւ մանկավարժական ավանդույթներ Մելգոնյանը ձեւավորել էր տեւական աշխատանքային փորձի կուտակումով, այն վառ անհատականությունների շնորհիվ, ովքեր ղեկավարում էին հաստատությունը եւ դասավանդում այստեղ, ինչպես՝ Հակոբ Թոփչյանը, Հակոբ Օշականը, Բարսեղ Կանայանը, Վահան Թեքեյանը, Վահրամ Մավյանը, Գեորգ Պողոսյանը, Հովհաննես Շեռհմելյանը, Գերսամ Ահարոնյանը, Վահե-Վահյանը, Սեպուհ Աբգարյանը եւ ուրիշներ:



Վարժարանի տարբեր տարիների շուրջ 1500 շրջանավարտներ տարբեր մասնագիտություններով նպաստել են շարունակում են նպաստել իրենց երկրների տնտեսական, մշակութային, կրթական, առողջապահական և այլ ոլորտների զարգացումներին: Նրանցից երկուսի՝ Կարպիս Մուրենյանի և Հակոբ Հակոբյանի արվեստը արդի հայ գրականության և գեղանկարչության ամենաբարձր նվաճումներից է, մեր մշակույթի պատմության լուսավոր ու մնայուն էջերից:

Ցավոք, արդեն 6 տարի է, գոց են Մելգոնյան վարժարանի դռները: Այլապես հաստատության 85-ամյա հոբելյանի հանդիսությունը պիտի որ նրա հայաշունչ կամարների ներքո անցներ: Այդպես չեղավ: Եվ ահա վարժարանի 1968-ի երախտապարտ շրջանավարտները գտան այլընտրանք՝ հարազատ կրթարանի 85-ամյակը տոնելու լավագույն վայրը և տարբեր երկրներից խմբվեցին Երեւանում, մայիսի 18-ին, երեկոյան, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան հյուրասեր ու մտերմիկ սրահում:

Բանախոսության և համերգային երկու մասերից բաղկացած հանդիսությունն անցավ պատշաճ կազմակերպությամբ, ազգային-հոգեւոր բարձր մթնոլորտում, ավարտին՝ հյուրասիրությամբ: Երեկոյի հաջողությունը պայմանավորված էր բանախոսների՝ Կարպիս Մուրենյանի, Բյուզանդ Ազգաշյանի, Մեպուհ Աբգարյանի ելույթների հազեցվածությամբ, ճիշտ ընտրված հանդիսավարի՝ փորձառու հեռուստամեկնաբան Արթուր Բախտամյանի՝ մթնոլորտը շահեկանորեն հարստացնող խոսքի ոչ միայն հանդիսավոր երանգով, այլև վերաբերմունքային շեշտադրությամբ և, իհարկե, գեղարվեստական ծրագրի մասնակից Հայաստանի պետական կամերային երգչախմբի համերգային ներկայությամբ, Ռոբերտ Մլքեյանի ղեկավարությամբ:

ՀՀ պետական հիմներգից և Մելգոնյան կրթական հաստատության քայլերգից հետո Արթուր Բախտամյանի առաջարկով բեմի էկրանին ցուցադրված լուսապատկերները ներկայացրին վարժարանի պատմության տարբեր դրվագներ: Հանդիսավարն անդրադարձավ Մելգոնյան կրթարանի կարեւոր շրջաններին, հիշատակեց հիմնադրին՝ Կարապետ Մելգոնյանին և մի դրվագ ներկայացրեց, երբ վարժարանը կառուցելու տեղ էր նա փնտրում և ամեն անգամ շատ արագ հեռանում: Երբ հարցնում են պատճառը, ասում է, որ պիտի այնպիսի տեղ լինի, որտեղից որեւէ մզկիթ չերեւա: «Իսկ մենք այսօր, XXI դարում Եվրոպայի կենտրոնում հայկական վարժարան ենք փակում»:



Դժվար ժամանակ է ապրում այսօր Մելգոնյանը, դադարել է նրա սրտի բաբախը: Բայց դժվարություններ անցյալում էլ ունեցել է: 1939-1945-ի պատերազմական

շրջանում վարժարանում ուսանում էր գրող, թարգմանիչ, էսսեագիր Կարպիս Սուրենյանը: Կարճ խոսեց Կարպիս Սուրենյանը: Բայց ընթերցողներին հայտնի է 2005-ին հրատարակված նրա երկհատոր ծավալուն Օրագրերը («Մարգիս Խաչենց» հրատ., հովանավորությամբ՝ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության), որի առաջին հատորի մի զգալի մաս նվիրված է Մելգոնյան վարժարանի ուսումնառության տարիներին: Երբ նա տակավին պատանի, բայց արդեն կյանքի ու գոյի որոնումներում ու լուրջ բացահայտումներում, օրագրություն էր անում թղթի կտորտանքներին, հաշվապահական թղթերի բաց տեղերին գրառումներով:



Նա պատմեց, որ 1942-ին, երբ ռազմական իշխանությունները դպրոցի շենքը գրավեցին եւ գորանոցի վերածեցին, իրենք ստիպված եղան բարձրանալ մոտակա լեռները եւ պատսպարվել Մակարավանքում եւ վրանների տակ: Բայց, պատմում էր նա, որեւէ ռումբ չպայթեց դպրոցի վրա, մինչդեռ 1974-ին, երբ Թուրքիան մտավ Կիպրոս, 40 ռումբ նետեց կրթարանի վրա:

«Ի՞նչն էր պահում մեզ եւ մղում զոհողությունների», հետահայաց հարց է տալիս գրողը, որի պատասխանը շատ վաղուց ունի՝ «Հայկական ոգին պահպանող ավանդույթները, հայկական շունչը, մթնոլորտը», ինչն, իհարկե, ստեղծում էին իրենց ուսուցիչները, մի մասը եվրոպական բարձրագույն ուսում ստացած, ինչպես՝ Պողոս Գեւորգյանը, «որ դաստիարակում էր, առանց դաստիարակելու», Գերսամ Ահարոնյանը, Հովի. Շեռհմելյանը եւ ուրիշներ: «Մելգոնյանն ըստ էության չի փակվել եւ չի կարող փակվել, որովհետեւ պատմություն ունի եւ հայ մշակույթի անբաժանելի մասն է»:

1968-ի շրջանավարտ է Բյուզանդ Ազպաշյանը, որի հանդիսությանը շուք հաղորդող ելույթի սկիզբը հարգանքի տուրք էր կյանքից հեռացած մելգոնյանցի ուսուցիչներին եւ ընկերներին. մեկ բոպե լռությամբ դահլիճը հարգեց նրանց հիշատակը: «Մելգոնյանը դուռ էր, որ կբացվեր հայ երիտասարդի մը համար՝ հայ ոգիով կրթության: Մելգոնյանը ազգային բուժարան էր՝ հայ մնալու, հայ ապրելու»:

Վարժարանի երկարամյա ուսուցիչներից, ներկայում «Գոհար» երգչախմբի ղեկավար Սեպուհ Աբգարյանը պատվավոր հյուրն էր հանդիսության, որի խոսքը մերթ հանդարտ, մերթ արտիստիկ ու մերթ հուզված էր: Իր համար առանձնահատուկ տոնական այդ օրը թանկ հիշողությունների վերադարձ էր, բայց միաժամանակ տխրության առիթ՝ վարժարանի ներկա վիճակի պատճառով, երբ «կտոր մը հայրենիքի դռները փակվեցին, անհաղորդ ու անկայուն մարդոց որոշումով»: Նախորդ բանախոսների եւ ներկաների պես նա նույնպես հավատում է վարժարանի վերաբացմանը. «Իրենց հոգիին մեջ այդ հաստատության սերը, սքանչելի հուշերը կուզան միանալու հայրենի հողին վրա՝ ըսելու որ 2005-ին Բարեգործական ընկերությունը պիտի Հայաստանի մեջ երկրորդ Մելգոնյան կրթարանը բանար. չհաջողեցավ: Բայց այս տղոց ըրածը ձեռով



մը վարժարանը նորեն կառուցանել է»: Հուզիչ էր այն պահը, երբ նա այսքան տարիներ պահած մեղքոնյանական մասունքներ վերադարձրեց նախկին սաներին, եւ նրանց նվերն էլ սիրելի ուսուցչին Մեսրոպազիբ այբուբենի խորհրդանշական կտավ էր:

Հանդիսության հետավարտի իմ գրուցակիցը նախկին մեղքոնյանցի, այժմ Աթենքում բնակվող Շահեն Բարդաքչյանն էր՝ Ամերիկյան բժշկական մի ընկերության Միջին Արեւելքի, Աֆրիկայի եւ Հյուսիսային Ամերիկայի ներկայացուցիչ: «Այս գործս էլ կպարտիմ Մեղքոնյանի դաստիարակության, որտեղ ուսմանս 7 տարին բոլորած եմ, 68-ին ավարտելով եւ անկե վերջ Երեւան ուսանած եմ: Մեղքոնյան վարժարանը ազգապահպանման կարեւոր գործ կկատարե սփյուռքի մեջ: Եվ հիմա այսպիսի առիթ մը պետք չէ կորսնցնել, քանի որ Եվրոմիության մեջ միակ հաստատությունը կըլլա, որ կադրեր կհայթայթե սփյուռքի տարբեր համայնքներեն եւ շատ կարեւոր է այդ հանգամանքը օգտագործել եւ վերաբացել դպրոցը: Եթե նկատի առնենք փոխնախարարի խոսքը, պետք է բոլորովին հույսով ըլլանք, որ երկու տարի վերջ վարժարանի վերաբացման հանդեսին դարձյալ Երեւանի մեջ կգտնվենք»: